



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

05 օգոստոսի 2022 թվականի թիվ 111-Ս

ք. Երևան

«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի Հանձնաժողովն (այսուհետ՝ *Հանձնաժողով*), ուսումնասիրելով 2022 թվականի հուլիսի 04-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 19 վարչական վարույթի նյութերը, *պարզեց*.

Հանձնաժողովի կողմից «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ *Օրենք*) վերապահված իր վերահսկողական գործառնություններն իրականացնելիս՝ տեսալսողական մեդիաձառայություն մատուցող «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ *Հեռարձակող*) գործունեության մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է Հեռարձակողի «ԿԵՆՏՐՈՆ» տեսալսողական ծրագրի կողմից **Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի** դրույթների պահանջների խախտման փաստեր:

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի (այսուհետ՝ *ՎՀՎՎ*) **30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով**, 2022 թվականի հուլիսի 04-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից Հեռարձակողի գործունեության մշտադիտարկման արդյունքների հիման վրա 2022 թվականի հուլիսի 04-ին կազմված *մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունը*: **Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի** համաձայն՝ *Արձանագրությունը* հիմք է հանդիսանում վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց:

Հանրային մուլտիպլեքսում Հեռարձակողի կողմից մի քանի օր անընդմեջ՝ սույն թվականի հունիսի 26-ից 30-ը ընկած ժամանակահատվածում, օտար լեզվով ցուցադրվել են ֆիլմեր ու մուլտֆիլմեր:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը համապատասխանաբար սահմանում են.

«1. Տեսալսողական տեղեկատվության լեզուն հայերենն է, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

2. Օտար լեզուներով հեռարձակվող տեսալսողական տեղեկատվությունը պետք է ուղեկցվի հայերեն ընկալման միջոցներով (կրկնօրինակումով, հնչյունավորումով և (կամ) ենթագրով): Հայերեն ընկալման միջոցներով ուղեկցումը պետք է կիրառվի բացառապես բնօրինակ լեզվով տեսալսողական տեղեկատվության նկատմամբ:»:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում՝ Օրենսդիրը հստակ սահմանել է, որ տեսալսողական տեղեկատվության ցուցադրության, հեռարձակման լեզուն **հայերենն է**, որին զուգահեռ նաև նախանշել է որոշակի բացառություններ: Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում Օրենսդիրն ամրագրել է, որ օտար լեզվով ցուցադրվող տեսալսողական տեղեկատվությունը (սույն պարագայում **ցուցադրված ֆիլմերն ու մուլտֆիլմերը**) պետք է ուղեկցվեն **կա՛մ հայերեն կրկնօրինակումով, կա՛մ հնչյունավորումով, կա՛մ (և՛) ենթագրով:**

Օրենքի **6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերն** արձանագրում են.

«Սույն դրույթը չի տարածվում՝

1) միայն ձայնի միջոցով տարածվող տեսալսողական տեղեկատվության վրա.

2) կարգավորող պետական մարմնի սահմանած կարգով Հեռարձակողների կողմից Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների մշակույթը ներկայացնող տեսալսողական հաղորդումների վրա.

3) օտար լեզվի ուսուցման նպատակով արտադրված տեսալսողական հաղորդումների վրա.

4) տեսալսողական հաղորդում կամ դրա մաս հանդիսացող երաժշտական ստեղծագործությունների վրա.

5) միայն արտերկրում սփռվող տեսալսողական հաղորդումների վրա:»:

Վերոգրյալի համատեքստում պարզ է դառնում, որ Հեռարձակողի կողմից օտար լեզվով ցուցադրված ֆիլմերն ու մուլտֆիլմերը չեն տեղավորվում Օրենքով նախանշված բացառությունների տակ՝ այնքանով որքանով, որ վերջիններս որևէ կերպ չեն կարող ներկայացվել որպես *ազգային փոքրամասնությունների մշակույթը, օտար լեզվի ուսուցման նպատակ չեն հետապնդել կամ երաժշտական ստեղծագործություններ, ինչպես նաև բացառապես արտերկրում սփռվող տեսալսողական հաղորդումներ չեն:* Վերոշարադրյալի համատեքստում նշյալ ֆիլմերն ու մուլտֆիլմերը պետք է ուղեկցված լինեին հայերեն ընկալման միջոցներով: Սակայն, ըստ կազմված Արձանագրության, Հեռարձակողը **2022 թվականի հունիսի 26-ից 30-ը ներքոհիշյալ ֆիլմերն ու մուլտֆիլմերը** ցուցադրել է օտար լեզվով.

1. **2022 թվականի հունիսի 26**

- ժամը 08:37-ին՝ «Երկնագույն մոլորակ»,
- ժամը 09:28-ին՝ «Էլվինը և Բուրունդուկները»,
- ժամը 12:45-ին՝ «Գավ անունով կատուն»,
- ժամը 13:59-ին՝ «Պաշտպանը»,
- ժամը 16:18-ին՝ «Դե սպասիր»,
- ժամը 22:06-ին՝ «Գրելանդիա»:

2. **2022 թվականի հունիսի 27**

ժամը 00:30-ին՝ «Երկնագույն մոլորակ»,
ժամը 08:40-ին՝ «Երկնագույն մոլորակ»,
ժամը 09:07-ին՝ «Խնձորի պարկը»,
ժամը 13:07-ին՝ «Գավ անունով կատուն»,
ժամը 13:53-ին՝ «Գրելանդիա»,
ժամը 16:51-ին՝ «Հեքիաթ մահացած իշխանուհու և 7 հսկաների մասին»,
ժամը 19:11-ին՝ «Երկնագույն մոլորակ»,
ժամը 20:30-ին՝ «Մեծ խաղաղրույքներ»,
ժամը 22:11-ին՝ «Ֆորսաժ 1»:

3. 2022 թվականի հունիսի 28

ժամը 01:08-ին՝ «Երկնագույն մոլորակ»,
ժամը 08:47-ին՝ «Երկնագույն մոլորակ»,
ժամը 09:07-ին՝ «Շապոկյակ»,
ժամը 13:15-ին՝ «Ինչպես առյուծը և կրիան երգեցին»,
ժամը 13:23-ին՝ «Անտոշկա»,
ժամը 13:49-ին՝ «Ֆորսաժ 1»,
ժամը 16:14-ին՝ «Գավ անունով կատուն»,
ժամը 16:35-ին՝ «Բարձր խաղաղրույքներ»,
ժամը 19:03-ին՝ «Երկնագույն մոլորակ»,
ժամը 20:34-ին՝ «Մեծ խաղաղրույքներ»,
ժամը 22:11-ին՝ «Ֆորսաժ 2»:

4. 2022 թվականի հունիսի 29

ժամը 08:05-ին՝ «Երկնագույն մոլորակ»,
ժամը 08:59-ին՝ «Անառակ թութակի վերադարձը»,
ժամը 12:01-ին՝ «Կոնյոկ գորբունոկ»,
ժամը 13:59-ին՝ «Ֆորսաժ 2»,
ժամը 16:37-ին՝ «Մեծ խաղաղրույքներ»,
ժամը 20:37-ին՝ «Մեծ խաղաղրույքներ»,
ժամը 22:34-ին՝ «Ֆորսաժ 3»:

5. 2022 թվականի հունիսի 30

ժամը 08:53-ին՝ «Երկնագույն մոլորակ»,
ժամը 09:18-ին՝ «Բարև ձեզ Տրյամ»,
ժամը 12:13-ին՝ «Կատվի տունը»,
ժամը 13:48-ին՝ «Ֆորսաժ 3»,
ժամը 16:36-ին՝ «Մեծ խաղաղրույքներ»,
ժամը 18:07-ին՝ «Երկնագույն մոլորակ»,
ժամը 20:32-ին՝ «Մեծ խաղաղրույքներ»,
ժամը 23:26-ին՝ «Ֆորսաժ 4»:

Հանձնաժողովը, 2022 թվականի հուլիսի 04-ին հարուցված, վարչական վարույթի մասին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ սույն վարչական վարույթի վերաբերյալ վերջինս կարող է ներկայացնել իր պարզաբանումները և բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի Հեռարձակողը որևէ պարզաբանում և բացատրություն Հանձնաժողով չի ներկայացրել:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Օրենքի **32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝** Հանձնաժողովը՝ իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի **42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ **սույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը** սահմանում են՝

«8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:»:

Օրենքի **6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը** սահմանում են.

«1. Տեսալսողական տեղեկատվության լեզուն հայերենն է, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

2. Օտար լեզուներով հեռարձակվող տեսալսողական տեղեկատվությունը պետք է ուղեկցվի հայերեն ընկալման միջոցներով (կրկնօրինակումով, հնչյունավորումով և (կամ) ենթագրով): Հայերեն ընկալման միջոցներով ուղեկցումը պետք է կիրառվի բացառապես բնօրինակ լեզվով տեսալսողական տեղեկատվության նկատմամբ:»:

Օրենքի **6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերն** սահմանում են.

«Սույն դրույթը չի տարածվում՝

1)միայն ձայնի միջոցով տարածվող տեսալսողական տեղեկատվության վրա.

2)կարգավորող պետական մարմնի սահմանած կարգով Հեռարձակողների կողմից Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների մշակույթը ներկայացնող տեսալսողական հաղորդումների վրա.

3)օտար լեզվի ուսուցման նպատակով արտադրված տեսալսողական հաղորդումների վրա.

4)տեսալսողական հաղորդում կամ դրա մաս հանդիսացող երաժշտական ստեղծագործությունների վրա.

5)միայն արտերկրում սփռվող տեսալսողական հաղորդումների վրա:»:

Հիմք ընդունելով վկայակոչված դրույթների պահանջները, ինչպես նաև վերջիններից բխող վերլուծությունները՝ Հանձնաժողովը փաստում է, որ Հեռարձակողը տեսալսողական տեղեկատվությունը՝ ֆիլմերն ու մուլտֆիլմերը, ցուցադրել է Օրենքով սահմանված կարգի խախտմամբ. վերջիններս ցուցադրվել են օտար լեզվով՝ առանց հայերեն ընկալման միջոցների ուղեկցության: Ինչպես նշվել է վերոգրյալում՝ հայերեն ընկալման միջոցների ուղեկցումն պահանջից կան որոշակի բացառություններ, սակայն դրանք որևէ կերպ վերաբերելի չեն քննարկվող հարցին: Առաջնորդվելով տեսալսողական մեդիան կարգավորող օրենսդրությամբ՝ Հանձնաժողովի համար հստակ է դառնում, որ Օրենսդիրն իմպերատիվ պահանջ է դրել օտար լեզվով ցուցադրվող ֆիլմերը հայերեն ընկալման միջոցներով ուղեկցելու համար, ինչը Հեռարձակողի կողմից չի կատարվել:

Փաստում ենք, որ Հեռարձակողը Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ է, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն, խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով. օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում են իրավական հետևանքներ և Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի **6-րդ հոդվածի 2-րդ մասում** ամրագրված հետևյալ պահանջը՝ *«Օտար լեզուներով հեռարձակվող տեսալսողական տեղեկատվությունը պետք է ուղեկցվի հայերեն ընկալման միջոցներով (կրկնօրինակումով, հնչյունավորումով և (կամ) ենթագրով): Հայերեն ընկալման միջոցներով ուղեկցումը պետք է կիրառվի բացառապես բնօրինակ լեզվով տեսալսողական տեղեկատվության նկատմամբ:»:*

Հանձնաժողովը, ուսումնասիրելով վարչական վարույթի նյութերը, վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված փաստերը, արձանագրում է, որ 2022 թվականի հունիսի 26-ից 30-ը ընկած ժամանակահատվածում, Հեռարձակողի «Կենտրոն» տեսալսողական ծրագրի կողմից վերևում թվարկված ֆիլմերն ու մուլտֆիլմերը, ցուցադրվել են օտար լեզվով, առանց հայերեն ընկալման միջոցների ուղեկցության:

Այսպիսով, Հանձնաժողովի կողմից վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ Հեռարձակողի կողմից կատարված իրավախախտումը համապատասխանում է Օրենքի **57-րդ հոդվածի 14-րդ մասի** հատկանիշներին:

Օրենքի **32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի** համաձայն՝ *կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:*

Օրենքի **55-րդ հոդվածի 1-ին մասի** համաձայն՝ *կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների*

խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմինն գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

«1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակագործան կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակագործան կամ լիցենզիայի գործողության դադարեցում:»:

Օրենքի 57-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն՝ հեռարձակման պահանջները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.03 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1 և 2-րդ մասերով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 14-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը որոշեց.

1. «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ընկերության նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 14-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով **232 313 (երկու հարյուր երեսուներկու հազար երեք հարյուր տասներեք) ՀՀ դրամի չափով:**

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈՒԲՅԱՆ

05 օգոստոսի 2022թ.

ք. Երևան